Սերգեյ Դովլաթով

Հանդիպեցինք, խոսեցինք

Բոլորը նրան ձախողակ էին համարում: Նույնիսկ նրա ազգանունը մի տեսակ թեթևսոլիկ էր. Գոլովկեր: Այդպիսի ազգանուն հարմար է, որ ունենա աննշան տեսք ունեցող, կարճատես մարդը՝ հակված է ռեֆլեքսիայի: Գոլովկերը հենց այդպիսի մարդ էր:

Դպրոցում հաջողեցրել էին պարզապես չնկատել նրան: Ծնողական ժողովների ժամանակ ուսուցիչները խոսում էին միայն գերազանցիկների և ծույլիկների մասին: Գոլովկերի նման միջակ դպրոցականին տրամադրվում էր մեկ րոպեից ոչ ավելի:

Գեղարվեստական ինքնագործունեությանը Գոլովկերը չէր մասնակցում: Նկարել և բանաստեղծություններ գրել չգիտեր: Նույնիսկ բանաստեղծությունները կարդում էր, ինչպես ասում են, առանց առոգանության: Մարմնամարզության դասերին չէր այցելում: Ազատված էր՝ հարթաթաթության պատճառով: Թե ինչ է հարթաթաթությունը՝ գաղտնիք է: Ես կարծում եմ դա ուղղակի մարմնամարզությամբ չզբաղվելու առիթ է:

Երգի ուսուցչուհին ասում էր նրան.

– Ձայն դու չունես: Եվ հոգի, կարծես թե, նույնպես չունես:

Ուսուցչուհին ունքերը վշտալի բարձրացնում էր և ավարտում.

– Ինչո՞վ ես դու երգում, Գոլովկեր…

Հասարակական աշխատանքով Գոլովկերը չէր զբաղվում: Թատրոն գնալ չէր սիրում: Պիոներական հավաքներում Գոլովկերին հարցնում էին.

– Ինչո՞վ ես հետաքրքրվում: Ազատ ժամանակդ ինչի՞ն ես տրամադրում: Միգո՞ւցե դու ինչ-որ կոլեկցիա ես հավաքում, Գոլովկեր:

– Այո, – ծուլորեն պատասխանում էր Գոլովկերը:

– Ի՞նչ կոլեկցիա:
– Դե հենց այնպես:
– Կոնկրետ ի՞նչ:
– Փող:
– Դու փո՞ղ ես հավաքում:
– Դե, այո:
– Ինչո՞ւ:
– Այսինքն՝ ինչպես թե ինչու՞: ՈՒզում եմ գնել:
– Ի՞նչ:
– ՈՒղղակի, մի բան:
– Բայց ի՞նչ: Պատասխանի՛ր: Կոլեկտիվը հարց է տալիս քեզ:
– Զմեռային վերարկու, – պատասխանում էր Գոլովկերը…

Դպրոցը ավարտելուց հետո Գոլովկերը ընդունվեց ինստիտուտ: Այն ժամանակ համարվում էր, որ դա կյանքում միակ ճանապարհն է: Մրցույթը համարյա ամեն տեղ հսկայական չափերի էր հասնում: Գոլովկերը շրջահայեցորեն վարվեց: Փաստաթղթերը հանձնեց այնտեղ, որտեղ մրցույթ փաստացիորեն չկար: Ավելի կոնկրետ՝ սանիտարա-հիգիենիկ ինստիտուտ:
Այնտեղ նա սովորեց վեցը տարի: Ընդ որում, այնպես, ինչպես դպրոցում, մնաց աննկատ: Գեղարվեստական ինքնագործունեությանը չէր մասնակցում: Դասախոսներին պրովոկացիոն հարցեր չէր տալիս: Աղջիկներից խուսափում էր: Գինի չէր խմում: Սպորտի նկատմամբ անտարբեր էր:
Երբ Գոլովկերը ամուսնացավ, բոլորը ապշել էին: Չափից դուրս քիչ էր աչքի ընկնում Գոլովկերը, որպեսզի ինչ-որ մեկի համար դառնար միակը և անփոխարինելին: Թվում էր, թե Գոլովկերը չի կարող լինել ընտրության առարկա: Չի կարող դառնալ նախընտրության օբյեկտ: Գոլովկերը անձնային որակներ բացարձակապես չուներ:
Եվ այնուամենայնիվ, նա ամուսնացավ: Լիզա Մակովսկայան նրա բացարձակ հակադրությունն էր: Նա կարմրահեր էր, հանդուգն և գրավիչ: Նա ծխում էր, հայհոյախոսում էր և երգում էր ֆակուլտետի ջազային խմբում: Նրա շուրջը մշտապես խմբվում էին սպորտային, լավ հագնված երիտասարդներ: Բոլորը սիրատածում էին Լիզային: Նա այդպես էլ չամուսնացավ: Իսկ հինգերորդ կուրսում երեխա ունեցավ: Աղջիկը նման էր մորը, ինչպես նաև

գաղափարաբանության գծով՝ կոմերիտ-կազմակերպչի տեղակալին:
Կարճ ասած, Լիզան վերածվեց դժվար ճակատագիր ունեցող կնոջ:
Արտահայտվում էր ցինիզմով և ջղային: Քսանհինգ տարեկանում հասցրել էր հիասթափվել կյանքից:
Եվ այստեղ հայտնվեց Գոլովկերը: Լռակյաց, ամաչկոտ: Նրա համար բերում էր ոչ թե ծաղիկներ, այլ՝ բանջարեղեն, և միրգ՝ երեխայի համար: Իր տենչանքը ցույց չէր տալիս: Տնային մանր-մունր հանձնարարությունները անբասիր էր կատարում:
Մի անգամ նրանք մարմելադով թեյ էին խմում: Երեխան քնած էր վարագույրից այն կողմ: Գոլովկերը վեր կացավ: Լիզան ասում է.
– Նախերգանքը ձգձգվեց: Մենք պետք է քնենք իրար հետ կամ բաժանվենք:
– Հաճույքով, – պատասխանեց Գոլովկերը, – միայն մյուս անգամ: Ես կարող եմ մնալ ուրբաթ: Կամ շաբաթ:
– Ո՛չ, այսօ՛ր, – գրգռված արտաբերեց Լիզան, – ես ցանկանու՛մ եմ դա:
– Ես նույնպես, – ուղղակի պատասխանեց Գոլովկերը:
Եվ հետո.
– Կմնամ, եթե դուք տաքսու համար ինձ մեկ ռուբլի ավելացնեք: Վերադարձի պայմանով, բնականաբար…
Այդպես նրանք դարձան ամուսին և կին: Ամուսինը ճաշարանների վարչության հիգիենայի գծով մասնագետ-տեսուչն էր: Կինը երեխային մանկապարտեզ տալուց հետո ընդունվեց գործարան: Այնտեղի տեղական ամբուլատորիայում էր աշխատում:
Իսկ հետո սկսվեցին սկանդալները: Ընդ որում՝ առանց որևէ հիմքի: ՈՒղղակի Գոլովկերը գոհ էր կյանքից, իսկ Լիզան՝ ոչ:
Գոլովկերը տարաժամկետով ձեռք բերեց գունավոր հեռուստացույց և պահարան: Կենդանաբանական խանութից ակվարիում գնեց: Սկսեց մտածել կոոպերատիվի մասին: Լիզան ի պատասխան դրան ասում էր.
– Ինչի՞ համար: Դա ի՞նչ է փոխում:
Եվ հետո.
– Մի՞թե սա ամբողջն է: Ախր տարիները գնում են է՛…
Լիզան, ինչպես ասում են, կյանքի մասին էր մտածում: Ընդհատելով լվացքը կամ մի կողմ դնելով կարուձև անելը, ասում էր.
– Ինչի՞ համար է այս ամենը: Լավ, ասենք էլի մի երկու հազար թխվածքաբլիթ

կերա: Մաշեցի մի տասներկու զույգ երկարաճիթ կոշիկ: Մի տասն անգամ Մերձբալթիկա գնացի…
Գոլովկերը չէր մտածում նման լուրջ բաների մասին: Նա հարցնում էր. «Մերձբալթիկան ինչո՞վ չէ քեզ գոհացնում»: Նա ընդհանրապես չէր մտածում: Նա ուղղակի ապրում էր և վերջ:
Միայն մեկ անգամ Գոլովկերը մտքերի մեջ ընկավ: Դա շարունակվեց քառասուն րոպեից ավելի: Հետո նա ասաց.
– Լիզա, լսի՛ր: Երբ ես առաջին կուրսի ուսանող էի, Դիմա Ֆոգելը էպիգրամ էր գրել. «Բոբ Գոլովկերի հետույքը ճակատից լայն է երեք անգամ»: Դու լսո՞ւմ ես: Ես այն ժամանակ նեղացա, իսկ հիմա մտածեցի. ամեն ինչ նորմալ է: Հետույքը ճակատից հենց լայն էլ պիտի լինի: Ընդ որում հենց երեք անգամ, ես հատուկ չափել եմ…
– Եվ դու, – հարցրեց Լիզան, – հինգ տարի մտածե՞լ ես այդ մասին:
– Չէ՛, դա ուղղակի այսօր մտքովս անցավ…
Մեկ տարի անց Լիզան նրան արհամարհում էր: Երեք տարի անց սկսեց ատել: Գոլովկերը դա զգում էր: Փորձում էր նրա նյարդերի վրա չազդել: Երեկոները հեռուստացույց էր նայում: Կամ հարևանին օգնում էր «Ժիգուլին» վերանորոգել: Միասին նրանք հազվադեպ էին քնում: Ամեն անգամ դա կնոջ անսպասելի քմահաճույքն էր լինում: Ամեն ինչ վերջանում էր արցունքներով:
Իսկ հետո սկսվեց արտագաղթը: Սկզբում դա վերաբերվում էր միայն ուրիշներին: Հետո սկսեցին գնալ ծանոթները: Քիչ ավելի ուշ՝ ծառայակիցները և ընկերները:
Հրեաները, ինչպես ասում են, գլուխ էին բարձրացրել: Կիսաձայն զրուցում էին իրար մեջ: Ծխախոտաթղթի շերտերն էին խշխշացնում:
Նրանց միջավայրում շրջանառվում էին ինչ-որ հատուկ փաստաթղթեր: Տարածվում էր ինչ-որ ներքին ինֆորմացիա: Նրանց շրջանում ի հայտ եկան ինչ-որ իրենց գործեր:
Եվ այստեղ Գոլովկերը անսպասելիորեն կերպարանափոխվեց: Սկզբում նա անփութորեն հայտարարեց.
– Արի՛ մեկնենք:
Հետո այդ թեմայի շուրջ խոսեց ավելի լուրջ: Ինչ-որ պատճառաբանություններ էր բերում: Մեջբերում էր ինչ-որ Գաբիի նամակներ:
Լիզան ասաց.

– Ես չեմ գնա: Մայրիկը այստեղ է: Այսինքն՝ նրա գերեզմանը: Ամենաթանկագին բաները այստեղ են: Էրմիտաժն այստեղ է…
– Որում դու տասը տարի չես եղել:
– Այո, բայց ես կարող եմ գնալ այնտեղ մոտակա շաբաթ օրը…Եվ վերջապես՝ ես ռուս եմ: Դու հասկանո՞ւմ ես. ռո՛ւս:
– Հենց դրանից էլ սկսեիր, – արձագանքեց Գոլովկերը և նեղացած լռեց: Կարծես կնոջը ստիպել էր, որ խոստովանի կատարած հանցագործությունը:
Եվ ահա Գոլովկերը մեկնեց: Նրա մեկնումը, ինչպես դա ամենից հաճախ պատահում է, մի փոքր նման էր ամուսնալուծության:
Էմիգրացիան ի հայտ բերեց մի տարօրինակ յուրահատկություն: Կամ, միգուցե, օրինաչափություն: Մարդիկ ինչ-որ պատճառով չէին կարողանում բաժանվել: Դժվար էր երկու տարբեր բնակարաններում գնալ-ապրելը: Իսկ ա՛յ տարբեր երկրներում՝ հեշտ:
Այդ պատճառով էմիգրացիայում այդքան շատ միայնակներ կան: Ընդ որում՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ՝ կանայք: Կախված նրանից, թե ով է եղել ամուսնալուծության նախաձեռնողը:
Երեք ամիս Գոլովկերը ապրեց Իտալիայում: Հետո տեղափոխվեց Միացյալ Նահանգներ:
Ամերիկայում նա անսպասելիորեն հարմար եկավ: Հայրենիքում ամենից շատ գնահատվում էին խելապակաս հերոսները և թեթևամիտ տաղանդները: Ամերիկայում՝ բարեխիղճ հարկատուները և ազնիվ աշխատողները: Գոլովկերը գնաց անգլերենի դասերի: Սովորեց մեքենա վարել: Աշխատեց որպես մերսող, ցրիչ, պահակ: Մեկ տարի ծառայեց ավտոսերվիսում: Ֆերմայում ճագարների էր խնամում: Հատուկ մեքենայով ավլում էր օդանավակայանի տարածքը:
Սկզբում Գոլովկերը տաքսի գնեց և այն վարելու իրավունք: Հետո՝ հողակտոր Դելավեր գետի ափին: Մեկ տարի հետո էլ՝ ներքին գնով՝ սեփական բնակարան Լեֆֆերտս-բուլվարում:
Տաքսին նա վարձակալության տվեց: Հողակտորը վերավաճառեց: Փողի մի մասը ներդրեց որպես ժամկետային ավանդ: Մնացած տասնչորս հազարով «Ալի-բաբա» ռեստորանի բաժնեմաս գնեց:
Ապրում էր նա լավ միկրոշրջանում: Կոստյումները գնում էր Բլյումինգդեյլից: Վարում էր «Օլդսմոբիլե-ռիջենսի»:
Կանանց նկատմամբ Գոլովկերը սիրալիր էր: Նրանց հրավիրում էր լավ, ոչ

թանկ ռեստորաններ: Նվիրում էր նրանց արդուզարդ և կոսմետիկա: Ընդ որում՝ իրադարձությունները չէր արագացնում:
Ամերիկուհիներին Գոլովկերը հարգում էր և ամաչում նրանցից: Նախընտրում էր համերկրացիներին՝ առանց երեխաների: Ամուսնության մասին չէր մտածում: Երեք անգամ նա եղավ Եվրոպայում: Մեկ անգամ՝ Իսրայելում: Երկու անգամ՝ Կանադայում:
Նա վաճառում էր տներ, բնակարաններ, հողակտորներ: Նրա գործերը հիանալի էին գնում: Նա բնատուր առևտրային գործակալ էր: Ուրիշների շահերի ներկայացուցիչը: Այսինքն մարդ՝ առանց անհատականության: Իզուր չէ, որ գոյություն ունի այսպիսի կարճ անեկդոտ: Ոմն մեկը զանգում է առևտրային գործակալին և հարցնում է. «Դուք սիրու՞մ եք Բրամս…»…
Ընդ որում՝ Գոլովկերը միաժամանակ սիրահոժար էր և օժտված սեփական արժանապատվության զգացումով: Համադրություն, որը հազվադեպ է պատահում:
Լիզայի հետ նամակագրություն չէր պահում: Չափից դուրս դժվար էր մի աշխարհից մյուսը գրելը: Մի մոլորակից՝ մյուսը:
Բայց նա օգնում էր նրան և աղջկան: Սկզբում ծանրոցներ էր ուղարկում: Հետագայում սահմանափակվում էր գումարային փոխանցումներով:
Դա նորմալ էր: Չէ՞ որ նրանք բաժանվել էին: Իսկ դուստրը. նա ընդհանրապես որդեգրված էր: Չնայած հենց նրան Գոլովկերը հիշում էր: Օրինակ, թե ինչպես է նա արձակում պստլիկ կոշիկների կապերը: Կամ կոճկում է կրծկալի սպրդող կոճակները: Եվ նաև, թե ինչպես է նա, ուղղելով աղջնակի ռետուզը, թեթևակի ցնցում նրան:
Լիզային նա չէր հիշում: Նա վերածվել էր ինչ-որ անտեսանելի ատյանի: Ինչ-որ էական, բայց անդեմ բանի: Յուրատեսակ հարկային վարչության:
Իսկ հետո հանկարծ ամեն ինչ փոխվեց: Գոլովկերի մոտ հայտնվեց իսկ և իսկ սևեռուն գաղափար: Ընդ որում՝ ոչ թե կամաց-կամաց, այլ միանգամից: Մի գեղեցիկ օր: Գոլովկերը նույնիսկ հիշում էր, թե հատկապես երբ դա տեղի ունեցավ: ՈՒթսուն վեց թվի օգոստոսի տասնյոթի ժամը մեկի ու երկուսի միջև: Գոլովկերը մեքենայով գրասենյակ էր գնում: Հենց նոր մի շահավետ գործարք էր ավարտվել: Միջնորդավճարը կազմել էր տասներկու հազար:
Ավտոմեքենան հեշտությամբ սահում էր հանքաձյութով ծածկված խճուղով: Գոլովկերը բաց կանաչ ֆլանելե կոստյումով էր: Նրա ձախ ձեռքից բարձրանում

էր «Քենթ» ծխախոտի ծուխը:
Եվ հանկարծ նա տեսավ իրեն ուրիշի աչքերով: Դա պատահում է: Իսկ ավելի կոնկրետ. իր նախկին կնոջ աչքերով: Ահա պանում է սեփական ավտոմեքենայի ղեկին հաջողակ գործարար Գոլովկերը: Նրա խիղճը մաքուր է, դրամապանակը լեփ լեցուն է փողով: Հարմարավետ գրասենյակում նրան է սպասում սիրունատես քարտուղարուհին: Նրա առողջությունը հրաշալի է: Հեմոգլոբի՞նը: Նա նույնիսկ չգիտի թե դա ինչ է: Նրա մոտ ամեն ինչ լավ է: Նրբաքսուքից հետո՝ հարթ մաշկ: Թանկագին կոշիկները չեն սեղմում: Եվ, ահա, Լիզան նայում է այդ մարդուն: Եվ մտածում է. ի՛նչ գանձ եմ ես կորցրել…
Այդպես էլ Գոլովկերի մոտ հայտնվեց սևեռուն գաղափարը: Այն է. նա պետք է հանդիպի կնոջ հետ: Նա կհասկանա և կհամոզվի: Իսկ ինքը միայն կհարցնի՝ «Եվ ի՞նչ» – և վերջ: Եվ ուրիշ ոչ մի բառ…«Եվ, ի՞նչ…»:
Գոլովկերը պատկերացնում էր վերադարձի պահը: Ահա նա ժամանում է: Ուղևորվում է հյուրանոց: Մեքենա է վարձակալում: Ըստ կուրսի փոխում է հազար դոլարը: Իսկ միգուցե և՝ երկուսը: Կամ՝ երեքը:
Հետո զանգում է նրան. «Լի՞զա: Այդ ես եմ… Ի՞նչ է նշանակում՝ ո՞վ: Հիմա ճանաչեցի՞ր… Այո՛, ճանապարհի վրա եմ: Ես, անկեղծ ասած, բավականին բիզի եմ… Չնայած այսօր, կարելի է ասել, ֆրի… Կներես, որ անցնում եմ անգլերենի…»:
Նրանք նստած են լավ ռեստորանում: Գոլովկերը պատվիրում է: Լիզային՝ որսամիս: Իրեն ինչ-որ թեթև բան: Մի քիչ ծնեբեկ, մուսս…Կոնյա՞կ:
Նախընտրում եմ «Կորդոն բլե»: Հայկակա՞ն: Դե, բերեք…
Գոլովկերը Լիզային ճանապարհում է տուն: Դուրս է գալիս մեքենայից: Բացում է դուռը: «Դե, բարո՛վ մնաս»: Եվ հետո. «Ա՛հ, այո, այստեղ հուշանվերներ են»: Գոլովկերը Լիզային է մեկնում շափյուղե վզնոցը: «Չ՞է որ սա քո քարն է»: Հետո՝ պլաստիկե տոպրակ՝ կանադական երկնագույն կաշվե վերարկուով: Ուսումնական համակարգիչ՝ Օլյայի համար: Մի փաթեթ՝ լի բրդյա իրերով: Երկու զույգ երկարաճիթ կոշիկներ:
Հետո նա մեղմորեն հարցնում է.
– Կարո՞ղ եմ մի քիչ փող թողնել քեզ համար: Բառացիորեն՝ մեկ ու կես, երկու հազար: Ջուտ սիմվոլիկ…
Նա մեղմորեն և հաստատակամորեն մեկնում է նրան ծրարը:
Նա.

– Կա՞նցնես ներս:
– Կներես, ես վաղը առավոտյան գործնական հանդիպում ունեմ: Մտածում եմ մի համեստ կոնցեսիայի մասին: Բամբակի նման մի բանի մասին: Կամ միգուցե էլեկտրոնիկայով զբաղվեմ: Ինձ շուկան է հետաքրքրում:
Լիզան.
– Շուկա՞ն: Նեկրասովյա՞նը, թե՞ Կուզնեչնին:
Գոլովկերը ժպտում է.
– Ես խոսում եմ սպառման շուկայի մասին…
Երեկոյան Լիզան նստած է նրա մոտ, հյուրանոցում: Գոլովկերը վերցնում է խոսափողը.
– Շամպայն:
Եվ հետո.
– Դու ամսագրերը թերթի, ես պետք է մի քանի զանգ կատարեմ: Հե՛լլո, միստեր Բելյաե՛ֆֆ… Գոլովկեր սպիկինգ: «Դորալ Էջենսի»-ի ներկայացուցիչը…
Շամպայնը խմված է: Լիզան հարցնում է.
– Ես մնա՞մ:
Նա՝ մեղմորեն.
– Կարիք չկա: Այս պուրիտանական երկրում…
Լիզան ընդհատում է նրան.
– Դու ինձ այլևս չե՞ս սիրում:
Գոլովկեր.
– Մի հարցրու ինձ այդ մասին: Չափից դուրս ուշ է…
Ահա նրանք գնում են գետափով: Մտնում են Էրմիտաժ: Դիտում են իտալացիների կտավները: Գոլովկերը ասում է.
– Ես կառնեի այս կանաչավուն Տինտորետտոյին: Հարցնել է պետք՝ միգուցե բոլշեվիկները վաճառքի համար ունենա՞ն ինչ-որ բան…

Կնոջ հետ հանդիպման մասին մտքերը չէին լքում Գոլովկերին: Դա տարօրինակ էր: Ամեն ինչ այլ կերպ պետք է լինի: Առաջին տարիներին մարդը կարոտում է բարեկամներին: Հետո սկսում է դանդաղորեն մոռանալ նրանց: Եվ վերջապես մնում են միայն հիշողությունների ուրվագծերը: Անորոշ ուրվագծեր հիշողության հորիզոնում, և վերջ:
Գոլովկերի մոտ ամեն ինչ այլ էր: Սկզբում նա Լիզայի մասին չէր հիշում: Հետո

սկսեց մեկ-մեկ մտածել նրա մասին: Եվ վերջապես սկսեց անընդհատ մտածել նախկին կնոջ մասին: Հուզմունքով, որը նրան զարմացնում էր: Որը վախեցնում էր հենց իրեն:
Ընդ որում՝ սիրո մասին չէ, որ մտածում էր Գոլովկերը: Եվ ոչ էլ իր նախկին կնոջ կողմից զղջման մասին: Գոլովկերը մտածում էր արդարության, տրամաբանության և կարգուկանոնի հաղթանակի մասին:
Ահա նա գնում է Նեվսկիով: Մտնում է կոոպերատիվ ռեստորան: Չորս կողմն է նայում: Ճաշացանկն է աչքի անցկացնում: Հետո ոչ բարձր ասում է.
– Գրողի ծո՛ցը գնացեք:
Եվ վերջ: «Գրողի ծո՛ցը գնացեք»: Եվ այլևս ոչ մի բառ…
Ռուսաստանի մասին միտքը չէր նահանջում: Երևակայական պատկերները հետևում էին մեկը մյուսին: Էմոցիաների մի ամբողջ շարան էր պատկերանում Գոլովկերին. զարմանք, ջղայնություն, ներողամտություն: Նրա ականջին հստակորեն լսվում էին առանձին նախադասություններ յուրաքանչյուր էպիզոդում: Օրինակ՝ ինչ-որ պատահական շինության ճակատային մասի մոտ.
– Պարդոն, ի՞նչ է նշանակում՝ «Գիպրովտորչերմետ»:
Կամ ինչ-որ կենցաղային անհարմարության դեպքում.
– Բոլշեվիկները ինձ իրոք որ հուզում են:
Կամ ճաշացանկը կարդալիս.
– Գները, ես ենթադրում եմ, ռուբլիո՞վ են նշված:
Կամ՝ երբ խոսքը գնա ներկայիս կառավարության մասին.
– Հուսով եմ, Գորբաչովը գոնե ցինիկ է: Իդեալիստը իշխանության ղեկին՝ աղետ է:
Կամ՝ եթե խոսքը գնա Ամերիկայի մասին.
– Ամերիկան դրախտ չէ: Բայց եթե դժոխք է, ապա լավագույնը՝ աշխարհում:
Կամ՝ ռեալիկ աբստրակտ ոճով: Այն դեպքում, եթե ինչ-որ զարմանալի բան պատահի.
– Ֆանտաստի՞կ է: Անպայման կպատմեմ այդ մասին ընկերոջս՝ Ֆիլ Կերրիին…
Նրա մոտ պատրաստի ռեալիկներ կային ամենատարբեր հնարավոր դեպքերի համար: Դուրս գալով բավականին լավ ռեստորանից, Գոլովկերը կասի.
– Սա արդեն կոպտություն չէ: Բայց և այնպես դեռևս սպասարկում չէ:
Դուրս գալով վատից՝ կնկատի.
– Այսպիսի բան ես չեմ հիշում, որ նույնիսկ Շանհայում լինի…

Գոլովկերը մշտապես ինչ-որ բան էր քրթմնջում, ժեստիկուլյացիա էր անում, ծիծաղում էր: Շփոթում էր անգլերեն և ռուսերեն բառերը: Հանկարծ դառնում էր մտածկոտ և լռակյաց: Շատ էր ծխում:
Եվ ահա նա հասկացավ՝ պետք է մեկնել: ՈՒղղակի վիզա պատվիրել և տոմս առնել: Այս գաղափարը կարժենա չորս հազար դոլար: Ներառյալ տոմսերի գինը, հյուրանոցը, նվերները և չնախատեսված ծախսերը:
Ժամանակները հիմա համեմատաբար լիբերալ են: Պրովոկացիաներ չպետք է որ լինեն: Փող կա:
Փաստաթղթերի ձևակերպումը տևեց երեք շաբաթ: Տոմսը նա պատվիրեց սեպտեմբերի տասնչորսի համար: Խանութներ էր գնում, նվերներ էր ընտրում: Պարզվեց, որ ինքը շատ քիչ ընկերներ և ծանոթներ ունի: Ծնողները մահացել են: Զարմուհին ապրում էր Կազանում: Համակուրսեցիների հետ Գոլովկերը նամակագրություն չէր պահում: Համադասարանցիների անունները մոռացել էր: Մնում էր Լիզան դստեր հետ: Օլենկայի տասներեք տարեկանը պետք է որ լրացած լիներ: Չէր կարելի ասել, որ Գոլովկերը սիրում էր այդ թախծոտ, քնքուշ աղջնակին: Նա ուղղակի ընտելացել էր աղջկան: Նամանավանդ, որ նա աշխարհում համարյա միակն էր, որ հարգանք էր տածում իր նկատմամբ:
Երբ մայրը նրան պատժում էր, նա խնդրում էր.
– Քեռի Բորյա, թույն առեք ինձ համար…
Գոլովկերը կապվել էր աղջկան: Չէ՞ որ մայրական և հայրական սերերը բացարձակապես տարբեր բաներ են: Մոր մոտ դա նախ և առաջ արյունակցական զգացմունք է: Իսկ հոր մոտ՝ հոգևոր հակում: Հայրերը նախընտրում են այն երեխաներին, որոնք իրենց կողքին են: Նույնիսկ եթե նրանք հարազատ էլ չեն: Այդ պատճառով էլ չար խորթ հայրերը անհամեմատ հազվադեպ են հանդիպում, քան բարկացած խորթ մայրերը: Դա արտահայտված է նույնիսկ ժողովրդական հեքիաթներում…
Լիզայի համար նա գնեց վերարկու և երկարաճիտ կոշիկներ: Օլյայի համար՝ բնական մորթուց մուշտակ և ուսումնական համակարգիչ: Գումարած՝ վերնաշապիկներ, ջինսեր, կոշիկներ և սպիտակեղեն: Ինչ-որ հուշանվերներ, գրիչներ, ռադիոընդունիչներ, երկու զույգ ժամացույց: Կարճ ասած՝ միայն նվերները երկու ճամպրուկ էին զբաղեցնում:
Գոլովկերին հաջողվեց փողը փոխել մեկը վեցի հաշվարկով: Գոլովկերը ինչ-որ Ֆայբիշեվսկու մոտավորապես յոթ հարյուր դոլար փոխանցեց: Լենինգրադում

ոմն Մուզա նրան կվոխանցի չորս հազար ռուբլի:
Թոնում էր Գոլովկերը ամերիկյան ընկերության ինքնաթիռով: Ինչպես, սովորաբար, իրեն ունևոր տուրիստ էր զգում: Անհոգորեն իր համար մի բաժին ջին պատվիրեց:
– Բլու ջինսե ընդ տոնիկ, – կատակեց Գոլովկերը, – ջինսը տոնիկի հետ:
ՈՒղեկցորդուհին հարցրեց.
– Դուք Լեհաստանի՞ց եք:
Մի՞թե, մտածեց Գոլովկերը, առոգանությունս պահպանվել է…
Լենինգրադի օդանավակայանը նրա դուրը չեկավ: Ամեն ինչ մոխրագույն և միապաղաղ էր թվում: Միգուցե գովազդի բացակայության պատճառով: Բացի այդ, նա առաջին անգամ էր ժամանում այստեղ: Ի՞նչ արած, այդպես էր ստացվել: Երեսուն երկու տարի այստեղ ապրել էր, իսկ ինքնաթիռ չէր նստել: Գոլովկերը մտածեց. ի՞նչ եմ ես զգում՝ հայրենի հողին ոտքս դնելով: Եվ հասկացավ՝ առանձնապես ոչինչ:
Նրան տեղավորեցին «Օկտյաբրսկայա» հյուրանոցում: Շուտով եկավ Մուզան՝ նյարդային և անհանգիստ շուրջը նայելով: Նրան տվեց փողի փաթեթը: Գոլովկերը զգում էր վախ, հոգնածություն, հուզմունք: Հյուրանոցում նա անցկացրեց մեկ ժամից ավելի, բայց Լիզային այդպես էլ չէր զանգում: Ինչ-որ բան նրան կանգնեցնում էր և վախեցնում: Պարզվում է, չափից դուրս երկար էր Գոլովկերը դրան սպասում: Միգուցե, բոլոր վերջին տարիները: Կարող է, ամեն ինչ, որ նա անում էր և նախաձեռնում, միայն Լիզայի համա՞ր էր: Նրա ուշադրության համա՞ր:
Եթե դա այդպես է, մտածեց Գոլովկերը, ապա ինչքա՛ն շատ բան է անցնում կողքով: Ապրում ես ու չգիտես՝ ինչի համար: Ինչի՞ համար ես փող վաստակում: Ինչի՞ համար ես սեփականություն ձեռք բերում: Ինչի՞ համար ես անցնում անգլերեն լեզվի:
Գոլովկերը նայեց ժամացույցին՝ ինն անց կես է: Վերհիշեց հեռախոսի համարը՝ չորս, տասնվեց… Եվ հետո՝ հարյուր հիսուն վեց: Ամեն ինչ ճիշտ է: Չորս՝ խորանարդ բարձրացրած… Նա բացարձակապես մոռացել էր մաթեմատիկան: Բայց հեռախոսահամարը հիշում էր՝ չորս, տասնվեց… Եվ հետո՝ նույն տասնվեցը քառակուսի աստիճան բարձրացրած: Հարյուր հիսուն վեց…
Հուզված, Գոլովկերը լսում էր հեռախոսազանգը, որ հնչում էր իր սեփական բնակարանում: Մեկ, երկու, երեք անգամ…

– Ո՞վ է, – հարցրեց Լիզան:
Եվ մի վայրկյանից.
– Խոսե՛ք:
Եվ այդ ժամանակ նա խուլ ձայնով արտասանեց.
– Գոլովկերների բնակարա՞նն է: Լի՛զա, դու ճանաչեցի՞ր ինձ:
– Մի րոպե սպասի՛ր, – լսում է նա, – թեյնիկը անջատեմ:
Եվ հետո՝ լռություն մի ամբողջ րոպե: Հետո ինչ-որ պարզ, ոչ անպայման բառեր.
– Դու եկե՞լ ես: Ես հուսով եմ, ամեն ինչ օրինակա՞ն է: Ինչպե՞ս: Դե ոչինչ… լողավազան է գնում: Դու գործերո՞վ ես: Դու ճամփորդու՞մ ես:
Գոլովկերը լռեց, հետո պատասխանեց.
– Արտահանում-ներմուծում: Դա քեզ չի հետաքրքրի: Մտածում եմ ոչ մեծ կոնցեսիայի մասին, բամբակի նման մի բանի…
Հետո նա որքան հնարավոր է անփութորեն հարցրեց.
– Հուսով եմ, կտեսնվե՞նք:
Եվ ավելի վստահ լինելու համար ավելացրեց.
– Ես պետք է որոշ բաներ փոխանցեմ ձեզ: Քեզ և Օլյային:
Նա ուզում էր ասել՝ իմ մոտ երկու ճամպրուկ նվերներ կան: Բայց միտքը փոխեց:
– Վաղը ես աշխատում եմ,- ասաց Լիզան,- երեկոյան Օլգան հրավիրված է Նախիմովների մոտ: Վաղը չէ մյուս օրը նա փորձի է: Դու երկա՞ր ժամանակով ես եկել: Հինգշաբթի օրը զանգի ինձ:
– Լիզա,– արտաբերեց նա լքված, խղճալի տոնով, – դեռ տասը չկա: Մենք այսքան տարի չենք տեսել իրար: Իմ մոտ երկու ճամպրուկ նվերներ կան: Ես կարո՞ղ եմ գալ: Մեքենայով:
– Մեր մոտ խնդիրներ կան դրա հետ կապված:
– Դու ի նկատի ունես տաքսի՞ն: Չէ՞ որ ես մեքենա եմ վարձակալում…
Ահա նա մտնում է (ինքն իրեն պատկերացնում էր Գոլովկերը) «Ավտովարձակալություն»- ում աշխատող մարդու մոտ: Լսում է.
– Սպասարկում ենք միայն արտասահմանցիներին:
Գոլովկերը համարյա շփոթված ժպտում է.
– Ես ախր, գիտեք ինչ… ՈՒզում էի ասել…
– Ես ախր ասում եմ, – կրկնում է պաշտոնյան, – միայն արտասահմանցիների համար: Դուք ռուսերեն հասկանո՞ճմ եք:
– Դժվարությամբ, – պատասխանում է Գոլովկերը և անցնում է անգլերենի…

Լիզան ասում է.
– Այսինքն իհարկե, արի՛: Չնայած, գիտես… Մի խոսքով, ես բավականին շուտ եմ պառկում քնելու: Իմիջիայլոց, դու որտե՞ղ ես:
– «Օկտյաբրսկի»-ում:
– Դա մի քառասուն րոպեի ճանապարհ է:
– Լիզա՛:
– Լա՛վ, ես սպասում եմ: Բայց Օլյային ես չեմ պատրաստվում արթնացնել…
Այստեղ սկսվեցին սովորական խորհրդային խնդիրները:
«Ավտովարձակալությունը» փակվել էր: Տաքսի բռնել չէր հաջողվում: Մի ինչ-որ մասնավոր մեքենա կանգնեցրեց, մեքենան Գոլովկերից ամերիկյան ծխախոտ վերցրեց և քշեց – գնաց:
Նա տեղ հասավ ժամը տասներկուսին: Ավելի ճիշտ տասներկուսին քառորդ պակաս: Զանգեց: Դուռը բացեցին: Նախկին կինը սկսեց խոսել կցկտուր և համարյա մեղավորի նման.
– Նե՛րս արի… Դու չես փոխվել… Ես անկեղծ ասած, շուտ եմ արթնանում… Դե նե՛րս արի՝ ասում եմ, նստի՛ր: Սուրճ դնե՞մ… Բոլորովին չես փոխվել… Դու գլխա՞րկ ես կրում:
– «Բորսալինո» ֆիրմայի , – հուսահատ արտահայտվեց Գոլովկերը:
Հետո քաշեց-հանեց անհեթեթ, պիստակի գույնի գլխարկը:
– Սուրճ ուզո՞ւմ ես:
– Մի՛ անհանգստացիր:
– Օլյան, բնականաբար, քնած է: Ես ահավոր հոգնում եմ աշխատանքի վայրում:
– Ես շուտ եմ գնալու, – խոսք գցեց Գոլովկերը:
– Ես դրա համար չեմ ասում: Ապրելը քանի գնում դժվարանում է:
Հրապարակայնություն, վերակառուցում, մարդիկ գրգռված են, ինչ-որ բանի են սպասում: Եթե Գորբաչովին հանեն, մենք դրան չենք դիմանա…Դու ասացիր՝ նվերնե՞ր: Շնորհակալություն, թո՛ղ միջանցքում: Ճամպրուկները վերադարձնե՞մ:
– Փոստով կուղարկես, – անսպասելի ժպտաց Գոլովկերը:
– Չէ, ես լուրջ եմ ասում:
– Ավելի լավ է՝ ասա, ինչպե՞ս ես ապրում: Ամուսնացա՞ծ ես:
Նա այս հարցը տվեց անփութորեն, ժպիտով:
– Ոչ: Ժամանակ չկա: Սուրճ ուզո՞ւմ ես:
– Որտեղի՞ց ես այն ճարում:

– Ոչ մի տեղից:
– Իսկ ինչո՞ւ չես ամուսնացել:
– Կյանքս է այդպես դասավորվել: Ինչ վերաբերվում է տղամարդկանց, նրանց պակասը չի զգացվում, և բոլորի ուշքը գնում է շփվելու համար: Իսկ ամուսնությունը՝ դա լուրջ բան է: Դու չե՞ս ամուսնացել:
– Ոչ:
– Եվ, ինչպե՞ս է այնտեղ, Ամերիկայում:
Գոլովկերը ուրախությամբ արտահայտվեց նախօրոք պատրաստած նախադասությամբ.
– Գիտե՞ս, հիանալի բան է՝ հարգել երկիրը, որում ապրում ես: Ո՛չ թե սիրել, այլ հենց հարգե՛լ:
Դադար:
– Միգուցե նայե՞ս, թե ինչեր եմ բերել: ՈՒզում եմ համոզված լինել, որ չափսերը համապատասխանում են:
– Մեզ բոլոր չափսերը համապատասխանում են, – ասաց Լիզան, – չէ՞ որ մենք առանց չափսի ենք: Իսկ ընդհանրապես, շնորհակալություն: Մի ուրիշը կմոռանար էլ այդ ալիմենտների մասին:.
– Սա ալիմենտ չէ, – ասաց Գոլովկերը, – սա՝ հենց այնպես: Քեզ և Օլյային:
– Գիտե՞ս ինչպես են ձեզ հիմա անվանում:
– Ու՞մ:
– Դե ձեզ:
– Այդ ու՞մ՝ ձեզ:
– Էմիգրանտներին:
– Ո՞վ է անվանում:
– Թերթերում գրում են՝ «մեր արտասահմանյան հայրենակիցները»: Ինչպես նաև՝
«շատ պատճառների բերումով արտասահմանում հայտնված անձինք»…
Եվ նորից դադար: Եվս մեկ րոպե, և ստիպված պետք կլինի գնալ:
Հուսահատությամբ Գոլովկերը արտասանում է.
– Լիզա՛:
– Հա՞:
Գոլովկերը մի քանի վայրկյան լռում է, հետո հանկարծ.
– Դե, կուզե՞ս պարենք:

– Ի՞նչ:
– Ես ռադիոընդունիչ ունեմ ճամպրուկում:
– Դու աննորմալ ես, Օլյան քնած է…
Գոլովկերը տենդագին մտածում է՝ դե, էլ ինչպե՞ս են սիրատածում կանանց:
Ինչպե՞ս: Նվերները մնացին դռան ետևում: Ռեստորան գնալու համար՝ ուշ է:
Պարել՝ նա չի համաձայնում:
Եվ այստեղ նա հանկարծ ասաց.
– Ես գնամ:
– Արդե՞ն… Չնայած, շուտով մեկն է: Հուսով եմ դու կզանգե՞ս ինձ:
– Վաղը ես գործնական հանդիպում ունեմ: Մտածում եմ մի ինչ-որ ոչ մեծ կոնցեսիայի մասին…
– Դու միևնույնն է՝ զանգի՛ր: Եվ շնորհակալություն ճամպրուկների համար:
Գոլովկերը ճամպրուկների համար չէր, որ նեղացավ, այլ նվերներո՛վ ճամպրուկների համար: Բայց լուռ մնաց:
– Դե, ես գնամ, – ասաց նա:
– Մի՛ նեղացիր: Ես բառացիորեն ոտքի վրա կանգնել չեմ կարողանում:
Լիզան ճանապարհում էր նրան: Դուրս եկավ դեպի սանդղահարթակ:
– Գնա՛ս բարով, – ասում է, – իմ արտասահմանցի հայրենակից: Անձ, որ հայտնվել է արտասահմանում…
Գոլովկերը դուրս է գալիս փողոց: Սկզբում նրան թվում է, թե անձրև է սկսվել: Բայց դա մառախուղ է: Խտացած խավարում աղոտ տարածվում են լապտերների դեղին հետքերը:
Անկյունից, ճոճվելով, դուրս է գալիս լույսով լեցուն ավտոբուսը: Կարևոր չէ, թե ուր է այն գնում: Երևի, կենտրոն: Ուրիշ էլ ու՞ր կարող են տանել ճանապարհները ծայրամասից:
Գոլովկերը նստում է ավտոբուս: Նետում է մետաղադրամը: Վարորդի քնկոտ ձայնը ասում է.
– Հաջորդ կանգառը՝ Ռոպշինսկայա, նախկին Զելենին, խաչմերուկ…
Գոլովկերը դուրս է գալիս: Հայտնվում է մի ամայի տեղի և աղյուսե անվերջանալի պատի միջև: Հեռվում՝ համարյա հորիզոնում, տներն են սևին տալիս՝ առկայծող դեղին և վարդագույն պատուհաններով:
Ինչ-որ տեղից լսվում է խուլ, միալար թակոց: Կարծես հսկայական շտամպ ունեցող ժամացույց է թկթկում: Ջրիմուռների և հիվանդանոցային զուգարանի

հոտ է գալիս:
Գոլովկերը ծխում է վերջին ծխախոտը: Ժամը մեկին մոտ տաքսի է կանգնեցնում: Ինտելիգենտ տեսքով վարորդը ասում է՝ «կրկնակի տարիֆ»:
Գոլովկերը մեխանիկորեն թարգմանում է նրա բառերը անգլերենի՝ «դաբլ թաքս»: Ինչո՞ւ: Ավելի լավ է չհարցնել: Բացի այդ՝ հիմա Գոլովկերի ինչի՞ն են պետք սովետական ռուբլիները:
Ճանապարհին վարորդը նրա հետ կոոպերացիայի մասին զրույց է բացում: Գովաբանում է ինչ-որ Նույկինի: Կշտամբում է ինչ-որ Զաբեժինսկու:
Գոլովկերը համառորեն լռում է: Նա մտածում է՝ ոնց որ ինձ առաջին անգամ արտասահմանցու տեղ դրին:
Հետո նա վճարում է վարորդին: Տալիս է նրան հասարակ ամերիկյան կրակվառիչ: Վերջինս, առանց շնորհակալություն հայտնելու, խցկում է դա գրպանը:
Գոլովկերը ձեռքով է անում.
– Եկե՛ք Ամերիկա:
– Բենզինս չի հերիքի, – հնչում է ի պատասխան…
Լուսավորված մայթին՝ հյուրանոցի դիմաց կանգնած են երկու կին՝ կարճ շրջազգեստներով: Նրանցից մեկը ծուլորեն մոտենում է Գոլովկերին.
– Տղամա՛րդ, դուք եկվո՞ր եք: Կուզե՞ք ձեզ ցույց տամ քաղաքը և նրա շրջակայքը:
– Ցու՛յց տվեք, – շշնջում է նա մի տեսակ խունացած ձայնով.
Եվ հետո.
– Միայն թե, ահա, ծխախոտս վերջացավ:
Կինը թևանցուկ է անում նրան.
– Բարում կգնես:
Գոլովկերը տեսնում է նրա ձեռքերը՝ երկար սադափե եղունգներով, և առանց կրնկամասի կոշիկները: Նկատում է հսկայական չափսերի խաչը՝ «Խիրոպրակտիկ Ալտշուլեր» մակագրությամբ տրիկոտաժե վերնաշապկի վրայով ընկած: Որսում է իր վրա ուղղված նրա պչրասեր և մռայլ հայացքը: Հետո համարյա անձայն արտաբերում է.
– Օրիո՛րդ, ներեցեք, դուք մարմնավաճառո՞ւհի եք:
Ի պատասխան լսվում է.
– Գռեհկություններ ասելը անպայման չէ: Իսկ ես էլ մտածեցի՝ «կուլտուրական ինտուրիստ՝ Եվրոպայից»:

– Ես Ամերիկայից եմ, – ասաց Գոլովկերը:
– Առավել ևս… Երեք ռուբլի տուր սրան, ճարպոտին:
– Փողը խնդիր չէ…
Անսպասելիորեն Գոլովկերը ավելի ինքնավստահ զգաց իրեն: Առավել ևս, որ այս ամենը թեթևակի հիշեցնում էր արևմտյան կյանքը:
Հինգ րոպեից նրանք նստած էին բարում: Աղոտ դեղնին էին տալիս լամպերը՝ քողարկված գիպսից պատրաստված ծովային խխունջներով: Երաժշտություն էր հնչում, որը Գոլովկերին հնաոճ թվաց: Սեղանների միջև թափառում էին մատուցողները, որոնք ինչ-որ բանով հիշեցնում էին հասիդների:
Գոլովկերի միտքն եկավ Մոնթիսելոյի շրջանի հասիդական գաղութը: Հին ժամանակների ինչպիսի՜ սև ու սպիտակ վերապրուկ՝ սովորական կյանքի գունավոր կինեմատոգրաֆում…
Նրանք նստած էին բարում: Կարամելի, թաց կոշիկների և մոտիկ գտնվող զուգարանից եկող ջրիմուռների հոտ էր գալիս: Վաճառասեղանի ետևում սպայական տեսակի տղամարդ էր վեր խոյանում. Գոլովկերը մի քանի դոլար մեկնեց նրան և ասաց.
– Ջին՝ տոնիկով:
Հետո հատուկ կարևորությամբ ավելացրեց.
– Բայց առանց լիմոնի:
Նա խմեց և իրեն նույնիսկ ավելի լավ զգաց:
– Ի՞նչ է ձեր անունը, – հարցրեց Գոլովկերը:
– Մամուլյաս Լյուսենկա էր անվանում: Իսկ ընդհանրապես՝ Լյուդմիլա:
– Ռուսլան, – հնարամտորեն ներկայացավ Գոլովկերը:
Նա պատվիրեց ևս երկու ջին, ծխախոտ գնեց: Նա ցանկանում էր սիրալիր լինել, շռայլ: Նա շշնջաց.
– Դուք տիպիկ Լայզա Մինելլին եք:
– Մինելլի՞, – կրկնեց կինը և բավականին ուժեղ բոթեց նրա կողքին: – Էլ ի՞նչ կուզեիր…
Լյուդմիլային այստեղ, ըստ երևույթին գիտեին: Ինչ-որ մեկին նա ձեռքով արեց: Ինչ-որ մեկին չցանկացավ տեսնել. «Ներողություն, ես տեղս փոխեմ»: Ինչ-որ մեկին նույնիսկ հյուրասիրեց իր՝ Գոլովկերի հաշվին:
Բայց Գոլովկերին դա էլ դուր եկավ: Նա իրեն հիասքանչ էր զգում:
Երբ մատուցողը սկուտեղով դիպավ նրան, Գոլովկերը ասաց Լյուդմիլային.

– Սա արդեն կոպտություն չէ: Բայց և այնպես դեռևս սպասարկում չէ…
Երբ նրա վրա պատահաբար գարեջուր թափեցին, Գոլովկերը ծիծաղեց.
– Այսպիսի բան նույնիսկ Շանհայում հետս չի պատահել…
Երբ նրա ներկայությամբ խոսեցին քաղաքականության մասին, Գոլովկերը արտահայտվեց այսպես.
– Հուսով եմ, Գորբաչովը գոնե ցինիկ է: Իդեալիստը իշխանության ղեկին՝ աղետ է… Երբ նրան հարցուփորձ արեցին Ամերիկայի մասին, ի պատասխան հնչում էր.
– Ամերիկան դրախտ չէ: Բայց եթե դժոխք է, ապա՝ լավագույնը աշխարհում…
Մեկ կամ երկու անգամ Գոլովկերը նետեց.
– Անպայման կպատմեմ այդ մասին ընկերոջս՝ Ֆիլ Կերրիին…
Հետո Գոլովկերը ինչ-որ մեկի հետ վիճում էր: Ինչ-որ բան էր ապացուցում, գրազ գալիս: Ինչ-որ մեկին տվեց փողկապը, գրիչը և ժամացույցը:
Հետո Գոլովկերի սիրտը խառնեց: Ինչ-որ ձեռքեր աստիճաններով քարշ էին տալիս նրան: Նա ընկնում էր և գոռում. «Ես Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի՛ եմ….»:
Թե ինչ եղավ հետո, նա չէր հիշում: Արթնացավ իր համարում, մենակ:
Լյուդմիլան անհետացել էր: Բնականաբար փողերի հետ միասին:
Գոլովկերը ինքնաթիռի տոմս պատվիրեց: Ցնցուղ ընդունեց: Իջավ սուրճ փնտրելու:
Նախասրահում նրան ձայն տվեց Լյուդմիլան: Նա միևնույն վերնաշապիկով էր:
Մոտեցավ նրան շուրջը նայելով և ասում է.
– Ես փողերը թաքցրել եմ, որ չկորեն:
– Քիփ իթ, – ասաց Գոլովկերը, – թողեք ձեզ:
– Օ՛յ, – ասաց Լյուդմիլան, – իրո՞ք… Ամենակարևո՛րը, որ պատերազմ չլինի…
Հանգստացավ Գոլովկերը միայն «Պանամ» ընկերության ինքնաթիռում:
Օդաչուներից մեկը սև էր: Գոլովկերը անչափ ուրախացավ, երբ նրան տեսավ:
Սևամորթը, ճիշտ է, պարզվեց, որ չխոսկան է և մռայլ: Փոխարենը՝ ուղեկցորդուհին շփվող դուրս եկավ, տիպիկ ամերիկուհի…

Ամառը մենք կնոջս հետ ամառանոց գնեցինք: Երկարաժամկետ բանկային վարկը մեր համար Գոլովկերն էր կազմակերպել: Նա իրեն պահում էր հասարակ և ինքնավստահ: Երբեմն առ երբեմն անցնում էր անգլերենից

ռուսերենի: Եվ հակառակը:
Կինս կամացուկ հարցրեց.
– Ինչո՞ւ Ռոն Ֆիննին դա չի անում:
– Ի՞նչը:
– Չի շփոթում անգլերեն բառերն ու ռուսերենները:
Ես պատասխանեցի.
–Քանի որ Ֆիննին երկու լեզուն էլ լիարժեք գիտի…
Այդպես մենք ծանոթացանք Բորյա Գոլովկերի հետ:
Մի ամիս առաջ մի էմիգրանտական շաբաթաթերթի լրագրող զրուցում էր Գոլովկերի հետ: Նրանից հարցազրույց էր վերցնում: Հետաքրքրվեց Ռուսաստան այցելությամբ: Սկսեց տարբեր հարցեր տալ գործարարին և հասարակական գործչին (Գոլովկերը հասցրել էր դառնալ Գրակֆոնդի խոշոր նվիրատու): Մասնավորապես այսպիսի.
– ՈՒրեմն, վերադարձե՞լ եք:
Գոլովկերը դադարեց ժպտալ և հաստատակամորեն պատասխանեց.
– Ես ընտրեցի ազատությունը: